

«ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ»-Ի ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Հաճախապատում ճառք» ժողովածուն հայ եկեղեցական մատենագրության մեծարժեք և ամենակարևոր կրոնական երկերից մեկն է, որը մեզ է հասել բազմաթիվ ձեռագրերով և ունեցել երեք հայտնի հրատարակություն, իսկ մեկ անգամ էլ թարգմանվել է գերմաներեն (Ռեգենսբուրգ, 1872) Յոհան Միխայել Շմիդի կողմից¹:

«Հաճախապատում ճառք»-ի միջնադարյան ձեռագիր ընդօրինակությունները կրում են Գրիգոր Լուսավորչի անունը, որը վկայում է նաև յուրաքանչյուր ճառի վերնագիրը (Երանելոյն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի և նմանները)²:

Գրիգոր Նարեկացին իր «Երգ երգոցի մեկնության» և Գրիգոր Մագիստրոսն իր «Մեծ են գործք» աշխատության մեջ «Հաճախապատումը» վկայակոչում են Գրիգոր Լուսավորչի հեղինակությամբ³:

Ձեռագիր հիշատակարաններում ևս վկայություններ կան «Հաճախապատում ճառք»-ի մասին:

Գ. Զարբհանայանն իր «Հայկական հին դպրութեան պատմութիւն» աշխատության մեջ վկայում է, որ ՌՃԻԲ =1112 թվականին Սիս քաղաքում գրված «Հաճախապատում» գրքի ձեռագրերից մեկն ունի հետևյալ հիշատակությունը. «Կատարեցաւ գիրքս՝ որ կոչի Յաճախապատում... էր օրինակ սորին ՅՀԸ = ԳՃՀԸ (378) տարի էր առաջի թուականն հայոց ի Լուսաւորչէն . . . զայս յաճախապատում օրինակն Սսայ Գրքատանն առաք ի մեր թուականս ԳՃԸ թին էր, այժմուս մեք գտաք մեր օրինակաց ժամանակին թին էր ՌՃԻԲ»⁴:

Բազմավաստակ բանասեր և ձեռագրագետ Գարեգին Ա կաթողիկոս

¹ «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 3, Երևան, 1999, էջ 62-63:

² Սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք, աշխատաւիրությամբ Ա. Տեր-Միքէլեանի, Էջմիածին, 1894, էջ 6:

³ Տեր-Պետրոսյան Լ., Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից (ե դար), Սոչի, 1993, էջ 35:

⁴ Զարբհանայան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, էջ 90-91:

Հովսեփյանցն իր «Յիշատակարանք ձեռագրաց» (Ե-դարից մինչև ԺԸ դար) բազմաշխատ գործի մեջ N 347 ձեռագրի տակ խոսում է «Յաճախապատում»-ի մի հնագույն օրինակի մասին.

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ, Ձեռագիր Երուսաղեմի, N 94, ՆԻԻԹ՝ թուղթ, ԳԻՐ՝ առաջին մասը միջին երկաթագրով, հետո հին բոլորագրով շարունակում է, ԳՐԻՉ՝ Պետր կամ Պետրոս (նաև Կիրակոս), ՍՍԱՅՈՂ՝ հայր Թորոս, ՏԵՂ՝ Ակներոյ վանք, ԺԱՄԱՆԱԿ՝ ՈԿԴ=1215թ.⁵:

Հայտնի բանասեր Նորայր Եպս. Պողարյանը «Հաճախապատում»-ի 1215 թվականի հնագույն ձեռագրի մասին գրում է հետևյալը.

«Յաճախապատում»-ի հնագույն ձեռագիրներեն մին է այս, եթե ոչ ամենահինը, և ուշագրավ ու հետաքրքրական է շատ մը տեսակետներե՛ք: Արտավազդ արք. Սյուրմեյան ցուցակագրած է զայն ժամանակին և ծանոթացուցած բանասերներու⁷: ... Շատ հավանական է, եթե ոչ բոլորովին հաստատ, որ մեր թիվ 94 ձեռագիրն ալ իբր գաղափար ունեցած ըլլայ 929 թվականը կրող երկաթագիր օրինակը:

. . . Երուսաղեմի թ. 94 Հաճախապատումին մեջ ունինք նոյն ճառերուն մեզի հասած հնագույն և ընտրելագույն օրինակը, 1215 թվականով, որ հարազատներեն կը ներկայացնէ 929 թվականը կրող իր նախագաղափարը⁸:

Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում կան «Հաճախապատում»-ի 7 գրչագիր օրինակներ՝ հետևյալ համարների տակ՝ N 8775, Երու-

⁵ **Գաբեգին Ա Հովսեփյանց**, Յիշատակարանք ձեռագրաց Անթիլիաս, 1951, էջ 775: Ստորև մեջբերում եմ ընդարձակ տարբերակը. «Շնորհիւ բարերարին Աստուծոյ կատարեցաւ լուսաւոր վարդապետութիւնս սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի՝ գիրքս, որ կոչի Յաճախապատում, ի թուականութեանս Հայոց ՈԿԴ, ի հայրապետութեան տեսառն Յոհաննիսի Հայոց կաթողիկոսի և ի թագաւորութեան աստուածասէր և բարեպաշտի Լեւոնի: Գրեցաւ հրամանաւ հար Թորոսի և յաւժարութեամբ ամենայն եղբայրութեանս՝ ի մեծ և հոշակաւոր անապատիս, որ կոչի Ակներոյ վանք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Առաքելոցս և աստուածընկալ նշանացս: Արդ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք և լուսաւորիք ի սուրբ վարդապետութեանցս, յիշելոյ արժանի արարեք զմեղապարտ և անարժան գրողս՝ Պետր և զծնողսն իմ և զեղբարս՝ զվենդանիս և զհանգուցեալսն, և Աստուած, որ առատըն՝ ողորմութեամբ իւրով, հատուցէ ձեզ և մեզ՝ ընդ ձեզ, ամեն»:

⁶ «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց», հ. Բ, կազմեց՝ **Ն. Եպս. Պողարեան**, Երուսաղեմ, 1953, էջ 179, ձեռագիր N 194, Յառաջաբան «բացատրութիւն Յաճախապատում գրոյ», -1, Երեմիա վրդ. Զօրլուցի, 1820:

⁷ «Ցուցակ Ձեռագրաց Երուսաղեմի», հ. Ա, Վենետիկ, 1948, էջ 225-228:

⁸ «Սիոն», 1961, թիվ 3, էջ 74-75:

սաղեմ, 1415, գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի (Ծերենց): «Հաճախապատում»-ի հնագույն գրչագիր այս օրինակի հիշատակարանը ոչինչ չի ասում: Մյուս օրինակներն են՝ N 3140 (1621թ.), N 1453 (1692թ.), N 4063 (1694թ.), N 1852 (1695թ.), N 1337 (1706թ.), N 6921 (1719թ.):

«Հաճախապատում ճառք»-ում քննարկվում են դավանական, վարդապետական, հոգևոր ու բարոյական աստվածաբանության կարևոր հարցեր, որի շնորհիվ էլ այն անգին գանձ է հայ եկեղեցական մատենագրության մեջ: Սակայն «Հաճախապատում»-ի հեղինակի, լեզվի և գրության ժամանակի, սկզբնագրի լեզվի և այլ մատենագրական հարցերի կողքին կարևոր է նաև ճառերի տպագրության հարցը:

Դավանական և բարոյախոսական 23 «հոգեշահ» ճառերից բաղկացած «Հաճախապատում ճառք» ժողովածուն մինչև այսօր ունեցել է մի շարք հրատարակություններ:

Մինչև ԺԸ դարի 30-ական թթ. «Հաճախապատում ճառեր»-ը մնում են ձեռագիր և առաջին անգամ տպագրվում են Կ. Պոլսում 1737 թվականին՝ Հովհաննես Կոլոտի պատրիարքության ժամանակ: Տպագրվող «Հաճախապատում»-ի ձեռագիրը բերել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրակ Պետրոս աստվածաբան վարդապետը⁹:

Առաջին տպագրությունն ունի հետևյալ տիտղոսաթերթը.

Գիրք որ կոչի

Յաճախապատում

Ասացեալ սուրբ Հորն մերոյ

Երանելոյն Գրիգորի Լուսաւորչին

Յորում պարունակին

Ճառք Յոգնապատումք

քսաներեք

վասն անհաս էութեանն Աստուծոյ

և խնամոց և սիրոյն որ

առ ստեղծուածս

և վարուց ուղղութեան և

Հատուցման գործոց

«Հաճախապատում»-ի առաջին տպագրությունը բաղկացած է ՄԿ էջից

⁹ Գիրք որ կոչի հաճախապատում, ասացեալ սուրբ Հորն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսավորչին, Կ. Պոլիս, տպ. Աստվածատուր Կոստանդնուպոլսեցվոյ, 1737 (ՌՃՁԶ):

(260) և ճառերի ցանկից (260-264), այնուհետև տպագրվել է «Յոհաննիսի վարդապետի Երզնկացոյ, ասացուած ներբողական գովեստ ի սուրբ Լուսաւորիչն հայոց ի մեծն Գրիգորիոս» ներբողը (էջ 265-310): Սա Լուսավորչին նվիրված մի հոյակապ ներբողական է՝ հայ հոետորական արվեստի և եկեղեցական մատենագրության անկրկնելի գոհարներից մեկը:

312-րդ էջից Լուսավորչի թոռնիկներին նվիրված ճառն է նույն հեղինակից (էջ 312-332), որին և կցվել է «շարական որդւոց և թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ» շարականը:

336-347-րդ էջերում տպագրվել է Պաղտասար Դպիրի ներբողականը՝ «ի սրբազան հայրն մեր երանելի Գրիգորիոս, ի թուին 1158» (1709թ.):

Հրատարակիչը բարի մտադրություն է ունեցել. նա քաղել և այբբենական կարգով կազմել է «Հաճախապատում»-ի՝ այդ «հոգելից սուրբ մատյանից» գեղեցիկ առանձին մտքեր, որոնք տպագրվել են 348-357-րդ էջերում:

Գրքի 358-360-րդ էջերում «Հաճախապատում»-ի առաջին տպագրության հիշատակարանն է՝ «Յայտարարութիւն ինչ յաղագս հոգելից սրբոյ մատենիս»: Իսկ վերջում՝ «Հաճախապատում»-ի կրոնական նշանակւթյանը նվիրված տողերից հետո, խոսվում է տպագրւթյան հանգամանքների մասին:

«Հաճախապատում»-ը ևս մեկ անգամ տպագրվել է դարձյալ Կ.Պոլսում 1824 թվականին: Այս տպագրւթյունն ամենայն մանրամասնւթյամբ «Հաճախապատում»-ի առաջին տպագրւթյան երկրորդ հրատարակւթյունն է:

Այս տպագրւթյունն առաջինից տարբերվում է միայն իր փոփոխված տիտղոսաթերթով: Գիրքը բաղկացած է 400 էջից: 3-290-րդ էջերը բնագիրն է, 291-293-ը 23 ճառերի ցանկն է: Հովհաննես Երզնկացու՝ Լուսավորչին նվիրված ներբողականը գրավում է 294-345-րդ էջերը, Լուսավորչի թոռներին նվիրված ներբողը՝ 346-370-րդ էջերը, նրանց նվիրված շարականը՝ 371-րդ էջը, իսկ Պաղտասար Դպիրի ներբողականը՝ 372-386-րդ, ապա ճառերից քաղված գեղեցիկ մտքերը՝ 387-400-րդ էջերում: Վերջին էջում կա նաև հիշատակարան:

«Հաճախապատում»-ի երկրորդ տպագրւթյունը կատարվել է Վենետիկում 1838 թվականին: Այս հրատարակւթյան մասին շատ տվյալներ չունենք: Երկը Վենետիկի Մխիթարյանները բանասիրական աշխատասիրւթյամբ հրատարակել են իրենց տպարանում (վերահրատարակւթյունը՝ 1954թ.)¹⁰: Ամենայն հավանականւթյամբ սրանք ձեռքի տակ եղած ձեռագրերի հիման

¹⁰ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում Ճառք և Աղօթք, Վենետիկ, 1838:

վրա կազմված (ոչ քննական) հրապարակումներ են (ընդգծումն իմն է): Հիշյալ հրատարակությունն ունի հետևյալ տիտղոսաթերթը.

«Մատենագրությունք նախնեաց Գրիգոր Լուսավորչի»

Սրբոյ Հօրն մերոյ

Գրիգորի Լուսավորչի

Յաճախապատում Ճառք

և Աղօթք

Գրքի 234 էջերն ընդգրկում են «Յառաջաբանը» (7-9), «Ցանկը» (10-11), «Եւ լուսավոր վարդապետութիւնս Յաղագս օգտի լսողաց» (11-15) վերնագրով հատվածը, որն ուղղված է ընթերցողին, «23 ճառերը» (15-231), և վերջին էջերում գտնում ենք Գրիգոր Լուսավորչի Աղոթքը (231-234)¹¹:

«Հաճախապատում»-ի երրորդ տպագրությունը կատարվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 1894 թվականին:

Այս հրատարակությունն ունի հետևյալ տիտղոսաթերթը.

Սրբոյ Հօրն մերոյ

երանելոյն

Գրիգորի Լուսավորչի

Յաճախապատում ճառք

լուսավորք

Յառաջաբան, համեմատութեամբ

և ծանօթութիւններով

Ա. Տէր-Միքէլեանի

տպարան

Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝

1894 = ՌՅԽԴ

Աստվածաբանության հմուտ գիտակ, մատենագետ և բանասեր Արշակ Տեր-Միքելյանի այս աշխատությունը եզակի է իր տեսակով, որպես բարեխիղճ ուսումնասիրություն, գիտական լուրջ ու արժեքավոր ներդրում մեր եկեղեցական մատենագրության մեջ:

Հեղինակն իր «Յառաջաբան»-ում անվերապահորեն «Յաճախապատում»-ը համարել է Լուսավորչի գործ և արդարացիորեն շատ բարձր է գնահատել գրքի կրոնական նշանակությունը մեր եկեղեցու և մեր մատենագրության համար:

¹¹ Նույն տեղում, էջ 5:

Ա. Տեր-Միքելյանը Ա. Էջմիածնի ձեռագրերի պահոցում գտնվող հինգ գրչագիր օրինակների, որոնցից երկուսը՝ հնագույն (Կարինյան ցուցակ N 1655 և N 1658), համեմատությամբ ճշտել, վերականգնել է «Հաճախապատում»-ի բնագիրը և հրատարակել գրչագիրների տարբեր ընթերցումներով և հիշատակություններով: Հեղինակը գրքի վերջում դրել է գրչագիրների համեմատության տարբերությունները:

Ա. Տեր-Միքելյանի աշխատությունը բաղկացած է 354 էջից, այդ թվում՝ «Յառաջաբան» (Ե-ԺԷ), բնագիր՝ 1-279 էջերը, «Լուսաբանութիւնք»՝ 280-313 էջերը, «Ընթերցումաժք»՝ 314-348 (ձեռագրի համեմատությունների տարբերություն), «Ցանկ նիւթոց»՝ 349-352, «Ցանկ գլխակարգութեանց»՝ 353-354)¹²:

Այս կարևոր հրատարակություններից հետո՝ բավական երկար ժամանակ անց միայն, սպասված աշխատանք կատարեց հայագիտության մեջ բանասեր, պրոֆեսոր Վ. Համբարձումյանը: Նա արևելահայերեն թարգմանեց և հայ ընթերցողին նորովի ներկայացրեց «Հաճախապատում ճառեր»-ը: Գիրքը տպագրվել է Թեհրանում 2003 թվականին և բաղկացած է «Առաջաբանից», «23 ճառերից», «Ծանոթագրություններից»: «Հաճախապատում»-ը հրատարակվել է Գրիգոր Լուսավորչի անունով¹³: Այն բավական հաջողված թարգմանություն է և մեծ հնարավորություններ է ընձեռում ուսումնասիրողներին և ընթերցողներին այս երկին ավելի լավ ծանոթանալու համար:

«Հաճախապատում»-ի հաջորդ տպագրությունը տեղի է ունեցել Հալեպում 2005 թվականին Մովսէս Նաճարեանի կողմից: Այն կրկին գրաբար բնագրից աշխարհաբար թարգմանություն է: Թարգմանիչ հեղինակը «Հաճախապատում»-ը ներկայացրել է որպես Մեսրոպ Մաշտոցի երկ, թեպետ նշում է, որ 23 ճառերի մագաղաթյա օրինակներն ավանդված են «Սրբոյ Հօրն Մերոյ Երանելոյն Գրիգոր Լուսաւորչի՝ Յաճախապատում ճառք» խորագրի ներքո:

Գրքի 239 էջերը բովանդակում են «Նախաբանը» (9-13), «Ծառերը» (13-228), «Աղոթքը» (230), որ ասվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից, երբ մեկն ընկնում է որոգայթի մեջ, և «բառարանը» (231-237)¹⁴:

Այսպիսով, լուսաբանելով մեզ հասած «Հաճախապատում ճառք»-ի ձե-

¹² Սրբոյ Հօրն մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք, աշխատասիրությամբ **Ա. Տեր-Միքելյանի**, Էջմիածին, 1894:

¹³ **Ս.Գրիգոր Լուսաւորիչ**, Հաճախապատում ճառեր, աշխատասիրությամբ **Վ.Համբարձումյանի**, Թեհրան, 2003:

¹⁴ Յաճախապատում, գրաբար բնագրից թարգմանեց **Մովսէս Նաճարեանը**, Հալեպ, 2005:

ռազրերն ու հրատարակված գրքերը, անկարելի է չնկատել այն կարևոր ազդեցությունը, որ թողել է կրոնական և բարոյախրատական քարոզների այս ժողովածուն բոլոր ժամանակներում՝ դառնալով մեծարժեք երկ հայ մշակույթի գանձարանում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձել ենք հայ եկեղեցական մատենագրության կարևորագույն երկերից մեկի՝ «Հաճախապատում ճառք»-ի ձեռագրերի և հրատարակությունների հարցին, հատկապես քննության է առնվել 1215 թվականի (Երուսաղեմ, ձեռ. N 94) հնագույն ձեռագիրը: Այնուհետև մանրամասն ներկայացվել են հայագիտությանը հայտնի և մինչև այսօր լույս տեսած «Հաճախապատում ճառք»-ի բոլոր հրատարակությունները (Կ.Պոլիս 1737, Վենետիկ 1838, Էջմիածին 1894):

Բանալի բաներ – «Հաճախապատում ճառք», ձեռագիր, Գրիգոր Լուսավորիչ, դավանական, բարոյախրատական, Մեսրոպ Մաշտոց, հրատարակություն, քարոզ:

О ВОПРОСАХ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ "МНОГОВЕЩАТЕЛЬНЫХ РЕЧЕЙ" И ИХ ПУБЛИКАЦИЯХ

НЕЛЛИ ПЕТРОСЯН

В данной статье мы обратились к вопросу о рукописях одного из важнейших произведений армянской церковной литературы, называемого «Многовещательные речи», и их публикациях. Особое внимание уделялось древнейшей рукописи 1215-го года (Иерусалим, рук. N 94). Далее подробно представлены все издания «Многовещательных речей», которые дошли до нашего времени (Константинополь, 1737, Венеция, 1838, Эчмиадзин, 1894).

Ключевые слова – "Многовещательные речи", рукопись, Григорий Просветитель, конфессиональный, нравоучительный, Месроп Маштоц, издания, проповедь.

THE "FAITFUL SPEECH" MANUSCRIPTS AND PUBLICATIONS ON THAT ISSUE

NELLI PETROSYAN

This article is a study of the different manuscripts and publications of "Faithful Speech", one of the Armenian Apostolic Church's most important works of literature. Of special inquiry

into to the oldest manuscript of the year 1215 (Jerusalem, hands. N 94) is realized. Also presented are all the known editions of "Faithful Speech" to Armenology, which are published until today (Constantinople, 1737, Venice 1838, Echmiadzin 1894).

Key words - "Faithful Speech", manuscript, Grigorius the Illuminator, confessional, preachy, Mesrop Mashtots, religious, publication, preachment.